

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ «ԱՐԿԱՄՔ ՆԱԽԱՀՈՐՆ»
ՊՈԵՄԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԻՑ

Բաճաթիւ. գիտ. դոկտոր Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Նախախորհրդային տարիներին Մ. Նալբանդյանի գրական ժառանգութիւնն անժանոթ էջերից առավել հանգամանորեն հետազոտվել և հնարավորին չափ խնամված հրատարակութեան է արժանացել միայն «Աղջմիք» ժողովածուն՝ շնորհիւ Երվանդ Շահազիզի համառ որոնումների ու անձնագոհ տրեւութեան, որի արդյունքը «Խորեն արքեպ. Գալֆայանը և Նալբանդյանի Աղջմիքը» հետազոտութիւնն է՝ բնագրի հավելվածով հանդերձ:

1899 թ. անսպասելիորեն ձեռք բերելով տարիներով որոնած ժողովածուի ձեռագիրը, որի առանձին նյութերի, մասնավորապես «Արկածք Նախահօրն» պոեմի բովանդակութեանը տեղյակ էր Ղ. Աղայանի հուշերից («Խմկյանի գլխավոր դեպքերը»), Ե. Շահազիզը նախ իր պարտքը համարեց յայտնի պատճառած ուրախութիւնը կիսել հայ գրականութեան իսկական բարեկամների հետ. «Շտապում եմ ավետել ձեզ շատ ախորժելի լուր,—գրում էր նաւ—Նալբանդյանցի գրվածներից մեկը, որ մինչև ցայսօր կորած էր համարվում, գտնված է, և դորա օրինակը այժմ գտնվում է մեր ձեռքին: Այդ «Աղջմիքն» է՝ «բաղկացած» գրարար բանաստեղծութիւններից և մի մեծ բերթվածից՝ «Արկածք Նախահօրն»: Սոքա բոլորը ևս գրված են ընտիր գրարարով և բանաստեղծութեան ճշմարիտ հոգով և քանքարով: Մարդ չէ կըշտանում կարդալով, այնքան գեղեցիկ է, նուրբ և թարմ. կարծես, «Դրախտ կորուստ» քերթվածի մի հրաշալի կտորը լինի: Կարծում եմ, որ դա մի մեծ յայտ է մեր գրականութեան համար, և եթե, ինչպես հարկն է, հրատարակվեր, մեծ «ֆուրոր» կաներ»¹:

«Լուսա» հանդեսն արդեն հաջորդ տարվա առաջին գրքում տպագրելով այս ուրախալի լուրը՝ հույս էր հայտնում, որ Ե. Շահազիզը շուտով հրապարակ կհանի այդ «թանկագին ավանդը»:

Հարկ եղավ, այնուհետեւ, ավելի քան երկուս ու կես տարվա համառ աշխատանք, մինչև որ Ե. Շահազիզն ավարտեց դեռ 1899-ին սկսած իր աշխատութեան հետազոտական ու բնագրային մասերը և ուղարկեց «Լուսայի» խմբագրութեանը: Ուսումնասիրութեան վերջում, սակայն, նշված է լուկ «1902 թ. օգոստ. 6, նոր նախիջևան»²: Տպագրութիւնն սկսվեց հանդեսի 1903 թ. № 2-ից (մարտ-ապրիլ) և ավարտվեց տարվա վերջին (№ 6, նոյեմբեր-դեկտեմբեր), զբաղեցնելով հինգ համարների 171 էջերը³: Նալբանդյանի

¹ «Լուսա», 1900, Ա գիրք (I կիսամյակ), էջ 353 (գրաքննութեան թույլատվութիւնը՝ 29 դեկտեմբերի 1899 թ.): Խմբագրութեան նյութերում նամակի ձեռագիրը չի պահպանվել: Ե. Շահազիզի գլուխ մասին մի ծանուցում էլ տպագրվել է «Տարազ» շաբաթաթերթում (տե՛ս 1900, № 10, մարտի 19, էջ 139), որին կցված է «Աղջմիքի» 7 քերթվածի՝ «Տեղի տան տիրութիւնը...», բնագիրը:

² Տե՛ս նույն տեղում, 1903, № 6, էջ 148:

³ Տե՛ս նույն տեղում, 1903, № 2, էջ 139—152. № 3, էջ 45—81. № 4, 59—83. № 5, էջ 101—148 և № 6, էջ 102—148:

քերթվածների բնագիրը տպագրվեց ուսումնասիրությունից անկախ, հանդեսի 1904 թ. № 1-ում (հունվար-փետրվար), որպես հավելված, նոր էջակալմամբ և հայկական թվանշաններով՝ Ա—Ի (1—20): Տպագրության ընթացքում տպարանում կորավ բանաստեղծություններից մեկի (է. Ո՛չ հանից արտաքս...) արտագրությունը: «Լուսնայի» 1904 թ. № 1-ի համապատասխան էջի տողատակին տրվեց ծանոթություն⁴: Պակասը լրացվեց ավելի ուշ, երբ Ծ. Շահազիզն ուղարկեց նոր արտագրություն: Վերջինս, հանդերձ ծանոթությամբ՝ զետեղվեց հաջորդ համարում (№ 2, էջ 259):

Այս ամենից հետո միայն (կամ դրանց զուգահեռ) սկսվեց և ավարտվեց աշխատության հրատարակությունն առանձին գրքով: Ժիշտ է, վերջինիս անվանաթերթի վրա դրոշմված է՝ «1903», և գրաքննության թույլատվության տարեթիվն էլ մատնանշված է «21 մարտի 1903 թ. Տփղիս», բայց դրանք վերաբերում են «Լուսնա» հանդեսում աշխատության ուսումնասիրություն մասի տպագրությանը:

Գրքի վրա տպարանական աշխատանքներն ավարտվել են 1904 թ. կեսերին: Վաճառքի է հանվել ավելի ուշ, ըստ որոշ տվյալների՝ 1906-ին միայն: Ծ. Շահազիզն առաջին օրինակները 1906-ին է նվիրել իր ծանոթներին ու բարեկամներին:

Եվ այսպես՝ յոթնամյա տքնությունները նախանձելի արդյունք տվին: Շահազիզի աշխատության լույս ընծայումից հետո, կարծես, «Աղջմիք» բանաստեղծական շարքի և «Արկածք Նախահօրն» պոեմի հետ կապված բոլոր հարցերը միանգամից պարզվեցին, և հետագա արծարծումներն ավելորդ համարվեցին: Նախաճառի այդ երկերի ընդհանուր ոգին, գաղափարական բովանդակությունն ու գեղարվեստական հատկանիշները բացահայտված էին գիտական լրջությամբ ու խորությամբ: Առարկայորեն ցույց էին տրված նորահայտ էջերի առնչությունն ու աղերսները խորեն Գալֆայանի «Վարդենիք» (Թեոդոսիա, 1863, գրաքննության թույլատվությունը՝ «17 դեկտ. 1862») ժողովածվի և արտաքին այլ աղբյուրների հետ: Հետազոտողն ըստ ամենայնի հաղթահարել էր նախաճառի քերթվածների խրթին լեզուն, թափանցել նրանց այլաբանական խորքի մեջ՝ տալով նաև կարևորագույն հատվածների բանաստեղծական համարժեք, սակայն արձակ վերապատումը՝ աշխարհարար լեզվով:

Այս ամենն աչքի առաջ ունենալով և, հիրավի, բարձր գնահատելով Ծ. Շահազիզի վաստակը, մեր վերջին մեծ նախաճառագետը՝ Աշոտ Հովհաննիսյանը, անգամ մեր օրերում, երբ փոխված էին գնահատման չափանիշները, ավելորդ համարեց վերարծարծել հին խնդիրները: Նրա կոթողային աշխատության մեջ «Աղջմիք» շարքին ու պոեմին սակավ էջեր են նվիրված, դրանք էլ իրենց էական կետերով հարասություններ են Ծ. Շահազիզի մտքերի: Անձամբ, քանիցս լսել ենք Ա. Հովհաննիսյանից, որ Ծ. Շահազիզի այդ հետադարձությունը լավագույնն է Մ. Նախաճառին նվիրված հայ բանասիրական գրականության մեջ, և ինքն անվիճելի է համարում նրա տեսակետը «Արկածք Նախահօրն» պոեմի և Զ. Միլտոնի «Կորուսյալ դրախտի» միջև գոյություն ունեցող աղերսների հարցում: Այդ ամենը նա հավաստել է նաև իր մեծագրության մեջ⁵: Բայց ահա՛ Ն. Մուրադյանը, սրբագրելով հանդերձ Ծ. Շահազիզին, հետևաբար նաև՝ Աշոտ Հովհաննիսյանին, ընդհանուր կարգով արյունակցություն է հայտնադործում սկզբում՝ «Արկածք

⁴ Տե՛ս 1904, № 1, էջ Թ: Արտատպության մեջ նույնպես այս ոտանավորը զետեղված է ո՛չ թե իր բուն տեղում, այլ դրքի վերջում, առանձին թերթի վրա, առանց համարակալման: Նշանակում է՝ արդեն 1904 թ. փետրվարին դրքի արտատպությունը հիմնականում ավարտված էր:

⁵ Աշոտ Հովհաննիսյան. Նախաճառը և նրա ժամանակը. գիրք II, Երևան, 1956, էջ 451—455:

⁶ Տե՛ս նույն տեղում, մասնավորապես էջ 454:

Նախահօրն» պոեմի և Պուշկինի «Գարրիելականի» («Гавриилада»), իսկ վերջում նաև՝ Վոլտերի, Պարնիի, գուցե և այլոց երկերի միջև՝ Պաշտելով գիտությունը և նալբանդյանագիտության շահերից ելնելով՝ Ե. Շահագիրը դեռ դարասկզբին գրել էր. «Մենք հեռու ենք այն մտքից, որ կարծենք, թե նալբանդյանցը գրական փոխարինություն է արել, ո՛չ. ամբողջ նյութը մշակված է ինքնուրույն, ինքնատիպ եղանակով, առանց մի տող փոխ առնելու, առանց մի որևէ բանաստեղծական պատկեր մուրալու՝ նմանողությունն ընդհանուր է. նման է պատմելու ձևը, նկարագրելու եղանակը, նյութի մշակության հանգամանքը, գաղափարը, նյութը: Անկասկած է, որ նալբանդյանցը կարդալիս ե ուսումնասիրել է «Կոռուստ դրախտին» և նորա ազդեցության ներքո հորինել է յուր քերթվածը»⁷:

Ե. Շահագիրն այսպես բարեխիղճ ու զգուշավոր էր, իսկ ահա՝ թե առանց փաստերի ու, երբեմն էլ, պատմական ճշմարտությունն անտեսելով՝ ինչ է ասում վերջին բանասերը. «Աղցմիթը» դա հայկական Գավրիիլադան է: Ինչպես Պուշկինի հայտնի սատիրայի, նույնպես և «Աղցմիթի» մեջ ծաղրված է կրոնը և քրիստոնեությունը... Պուշկինի պոեմի տպագրությունը մինչև հեղափոխությունը արգելված էր Ռուսաստանում, համարյա նույն բախտին է արժանացել նաև նալբանդյանի գործը:—«Դա Վոլթերի, Պարնիի և Պուշկինի երգիծական երկերի ոգով գրված մի երկ է» և այլն⁸:

Նալբանդյանի երկը Պուշկինի ու մյուսների գործերի հետ ոչ մի աղերս չունի: «Աղցմիթը» ամբողջությամբ տպագրվել է հեղափոխությունից շատ առաջ, իսկ դրանից էլ առաջ նրա մասին գրվել է մամուլում: «Գավրիիլադան» լայնորեն տարածվել է ձեռագիր արտագրությունների միջոցով, դեռ 1820-ական թթ.

Նախորդ բոլոր բանասերները մի հարցում, այնուամենայնիվ, անպարտ չեն: «Աղցմիթի» հետ կապված հարցերի ընթացքում ընդհատելով Գալֆայանի երկերի դեմ նալբանդյանի մղած բանավեճի մասին ընդհանուր դատողություններով՝ անտեսել են մի բանի ո՛չ նվազ կարևոր խնդիրներ, որոնք այսօր էլ իրենց լուծմանն են սպասում. կրկին անհայտ են մնում, թե 1) որոշակիորեն և՛ որ է հղացել ամբողջությամբ վերցրած՝ «Աղցմիթ» բանաստեղծական շարժի և մասնավորապես «Արկածը Նախահօրն» պոեմի գրության գաղափարը: 2) Ի՞նչ վերաբերումներ է բնեցել մասնավորապես պոեմի ստեղծագործման ընթացքը և 3) Ի՞նչ հետքեր են մնացել այդ երկերի նախնական փորձերից:

Մենք այս հարցերն առաջադրում ենք աներկմտորեն, որովհետև դրանց պատասխանները դժվար չպիտի լինեն տալ, եթե արդի նալբանդյանագետներն ուշադրությամբ վերծանած լինեին գրողի թողոններում պահվող նյութերը, որոնք, անհասկանալիորեն, վրիպել են և՛ Աշոտ Հովհաննիսյանի, և՛ Նշան Մուրադյանի (նալբանդյանի Երկերի լիակատար ժողովածվի I հատորներում, 1945 և 1979 թթ.) ուշադրությունից:

Ե. Շահագիրը ևս այդ առումով մի որոշ չափով իր «մեղքն» ունի, եթե դա կարելի է մեղք համարել: Հետնորդները կարծել են, թե նա շրջանառության մեջ է դրել բոլոր նյութերը, լուծել է բոլոր հարցերը և մի կողմ են բաշխել, այնինչ Ե. Շահագիրը իր հետազոտության մեջ գերազանցապես ծավալվել է խորեն Գալֆայանի կենսագրության ու թողած գրական ժառանգության ոլորտներում, բանասիրական քննության առնելով նրա երկերն ու սրանց

⁷ Նշան Մուրադյան. Հայկական Գավրիիլադան.—Գրական թերթ, 1938, հոկտեմբերի 22, № 45, էջ 3, նաև՝ Մ. Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով. հ. 1, Երևան, 1979, էջ 444:

⁸ Ե. Շահագիրը. Խորեն արքեպ. Գալֆայանը և նալբանդյանի «Աղցմիթը». Թիֆլիս, 1903, էջ 155—156: Տողատակին Շահագիրը մատնացույց է արել մի փոխառություն. «Միլտոնի Ռաֆայել վեցթևյան է, նալբանդյանցինը՝ «Վեցթևեանն անդ երկոթամբ...» և այլն:

⁹ Տե՛ս Ն. Մուրադյանի՝ վերևում հիշված հոդվածն ու ծանոթությունը:

առնչությունները ֆրանսիական գրականության հետ (լամարտին, Հյուգո), իր գրքի մեջ են գտնվում միայն (թ' և Ժ), այն էլ ավելի քան 170 էջանոց գրքի միայն 29 էջ հատկացնելով Գալֆայանի «Վարդենիք» և Նալբանդյանի «Աղցմիթի» աղերսներին և բացահայտելով ինչպես այդ երկու երկերի նախահանգեղարվեստական հատկանիշները, այնպես էլ նրանցում վերարտադրված իրողությունների ու տրամադրությունների իրական ու բանաստեղծական հավաստիության մակարդակը:

Ծ. Շահազիզն ավելին չէր էլ կարող անել, որովհետև այն մամանակ, այսինքն՝ 1900—1902 թթ., «Աղցմիթի» արտագրությունից բացի, նրա ձեռքին ուրիշ նյութեր չկային էլ: Բանասերն անգամ տեղյակ չէր, որ «Արկածք Նախահօրն» պոեմի առաջին մասը՝ «Արկածք Աղամայ» խորագրով, դեռ 1874 թ. տպագրվել է Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլ» հանդեսում (№ 9, էջ 382—384) և բնագրային տարբերություններ ունի իր օգտագործած օրինակի համեմատությամբ, որ Մամուրյանի հրատարակածն առավել խնամված արտագրություն կամ ձեռագիր է ենթադրել տալիս (Երկրորդ մասի չի տպագրվել «Հրատարակության անպատշաճությունը պարունակելու պատճառով»):

Վերջապես՝ Ծ. Շահազիզի օգտագործած ձեռագիրն էլ (որն «Աղցմիթից» բացի պարունակել է նաև «Մամիկոնյան մեծ Վահանի պատասխանը» և «Հյուսիս» լրագրի դեմ գրած «Հիշենք» բանաստեղծությունների ընդօրինակությունները) ոչ թե Նալբանդյանի բուն ինքնագիրն էր, այլ Աստրախանի բնակիչ Տեր Հարություն քահանա Յաղուբյանին պատկանող գրչագրի արտագրությունը՝ կատարված նույն քաղաքի բնակիչ և Ծ. Շահազիզի բարեկամ Մկրտիչ Պոպովի ձեռքով, որի կարծիքով՝ գաղափար օրինակը «պետք է որ հենց հանգուցյալ Նալբանդյանցի իսկական ձեռագիրը լիներ», թեև ձեռագրի վրայից «հեղինակի անունը և ազգանունը՝ գրության թվականի հետ միասին, քերված, ջնջված էր»¹⁰: Իսկ թե, առհասարակ, ի՞նչ արդյունք կարելի է սպասել մասնագիտական հմտություն չունեցող հետաքրքրասերի արտագրությունից, հազիվ թե հարկ լինի մանրամասնել: Դատելով Ծ. Շահազիզի հրատարակած բնագրից՝ առանձնապես «Արկածք Նախահօրն» սյուժեի մեջ քիչ չեն բառերի ոչ ճիշտ վերծանությունները, ուղղագրական ու կետադրական սխալները, թերևս նաև՝ առանձին բացթողումներ:

Ցավոք, այսօր մեր միակ հիմքը Շահազիզի հրատարակած բնագիրն է, լույս տեսած նախ՝ «Լուսայի» էջերում, 1904-ին (№ 1 և № 2), և հետո՝ առանձին գրքով, որովհետև չեն պահպանվել (կամ առմիշտ կորած, ոչնչացած են) և՛ Նալբանդյանի ինքնագիրը, և՛ Մ. Մամուրյանի օգտագործած օրինակը, և՛ Ծ. Շահազիզի համար կատարված արտագրությունը: «Լուսայի» խմբագրի՝ Գյուլտ քահանա Աղանյանի թողոններում առ այսօր այս վերջինի հետքերը երևան չեն եկել (Գրականության և արվեստի թանգարանում պահվող մասում դրանք չկան):

Բայց որոնողը, եթե համառ է, այնուամենայնիվ ինչ-որ բան կգտնի, եթե ոչ Նալբանդյանի ամբողջական ինքնագիրը, ապա, գեթ, տվյալ երկի ստեղծագործական ձեռագրերից որևէ պատահելի: Դրա ապացույցը «Արկածք Նախահօրն» պոեմի նախնական սևագիր տարբերակից առանձին տողեր ու հատվածներ պարունակող ինքնագիրն է, զբի քննությանն են նվիրված հետագա էջերը և որի հնարավոր, ճշգրիտ վերծանությունն ստորև ներկայացնում ենք ուսումնասիրողներին ու հետաքրքրյալներին: Բայց մինչ այդ նկարագրենք ձեռագիրն ըստ ընդունված կարգի:

Խնդրո առարկա ինքնագիր (սևագիր) նշումներն արված են բանաստեղծ և երաժիշտ Հ. Սահրատյանից 1864 թ. հուլիսի 28-ին ստացված նամակի 2,3 և 4-րդ մաքուր էջերի վրա, ըստ որում՝ երկծալ (երկթերթ) փոստի թուղթն (12,3×21) օգտագործելուց առաջ վերպտին ծալված և դարձված է

¹⁰ Ծ. Շահազիզ. Նշվ. աշխ., էջ 146:

վեց բառածալ կիսաէջ կամ սյուն։ Գրառումները կատարված են մերթ էջի մի կողմից, մերթ էլ՝ մյուս։ Էջ 2-ում օգտագործված են երկու կիսաէջերը կամ սյուներն էլ, իսկ էջ 3—4-ում՝ միայն մեկական կիսաէջերը կամ սյուները (մյուսների վրա արտագրված են զանազան մտքեր ժան ժակ Ռուսսոյի և Աննա Լուիզա ժերմենա դը Ստալի երկերից, որոնց մասին քիչ հետո)։ Սահրատյանի նամակը, հետևաբար նրա մաքուր մնացած 2—4 էջերի վրա Նախնականի արած նշումների և բանաստեղծական տողերի ինքնագիր բնագիրը, պահվում են՝ ԳԱԹ, ՄՆՖ № 121—II (96)։

Նշումներն ու քաղվածքները որոշակի կարգ չունեն, ոչ էլ թվագրված են, թեպետ Սահրատյանի նամակն ինքնըստինքյան հուշում է, որ, համենայն դեպս, դրանք 1864 թ. օգոստոսից առաջ չէին կարող թղթին հանձնվել։

Առ այսօր նշումներից և ոչ մեկը վերծանված, վկայակոչված, մեկնաբանված ու հրատարակված չէ։ Նախնականի թողոնների ցուցակագրողը (Պարզուհի Սիմոնյանը) չնայած որ ժամանակին կռահել է պատահականի արտաքին աղբյուրները և զգաստացնող հիշեցում արել թանգարանի ցուցակում, բայց նախնականագետները ուշադրության չեն առել նրա խոսքերը։

Ելակետ ունենալով Նախնականի գրառումների մեջ նկարագրվող անցքերի ներքին բովանդակությունը և բաղդատելով դրանք արդեն ավարտված պոեմի հետ, մասնավորապես սյուժեի զարգացման առումով, նորահայտ ավարտուն, կիսատ ե ջնջված բանաստեղծական տողերը կարելի է բաժանել միմյանց հաջորդող վեց հատվածի, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին տրոհվում է երկու-երեք առանձին մասերի կամ ենթահատվածների, որոնք երբեմն միմյանցից անկախ դիպվածներ են ենթադրել տալիս։

Առաջին հատվածի կամ պատահականի բանաստեղծական տողերի ինքնագիրը տես ԳԱԹ ՄՆՖ № 121—II (96), էջ 2, սյուն 1 (էջի հակառակ կողմից)։ Երկրորդ ե երրորդ պատահականները՝ նույն տեղում, էջ 4, սյուն 1։ Չորրորդները ամբողջությամբ՝ վերստին նույն տեղում, էջ 3, սյուն 1։ Հինգերորդները՝ էջ 2, սյուն 2, և վեցերորդները՝ էջ 2, սյուն 1։ Բացառությամբ 6-րդ պատահականի 3-րդ ենթահատվածի, որ գրված է թանաքով, մնացած բոլոր նշումները, նաեւ նամակի մաքուր էջերին, բանաստեղծական հատվածների հարեանությամբ արտագրված ֆրանսերեն քաղվածքներն արված են տարբեր որակի սե մատիտներով, հետաբար և՛ որոշ ընդմիջումներով, բանատողերի հետ խառն։ Դա հիմնավորվում է և նրանով, որ ֆրանսերեն քաղվածքներն զրադեցնում են ո՛չ թե ամբողջական էջեր, այլ միայն կիսաէջեր (էջ 3—4-ի 2-րդ սյուները)։ Դրանց ընդհանուր թիվը վեցն է, հինգը քաղված է ժան ժակ Ռուսսոյի «Նոր էլոիզ» վեպից (մասնավորապես Երկրորդ առաջաբանից), իսկ վեցերորդը՝ մաքամ դը Ստալի «Դեմոֆինա» վեպի առաջաբանից։ Հինգն արտագրված են 4-րդ էջի 2-րդ սյունակում, մեկը, վերջինը՝ 3-րդ էջի 2-րդ սյունակում։

Ահա՛ դրանց վերծանությունն ու հայերեն թարգմանությունը, որ մեր խնդրանքով կատարել է բանասեր Նոյեմ Հարությունյանը և որի համար մեր ջերմ շնորհակալությունն ենք հայտնում։

Partie I, Livre I

Il m'aimait autant qu'un polisson peut aimer quelque chose.

Ce n'est pas ce qui est criminel qui coûte le plus à dire, c'est ce qui est ridicule et honteux.

L'amour n'est qu'illusion.

„Nouv<elle> Héli<oise>“, seconde preface, p. 7.

Je suis trop content de lui pour l'être de moi: à ton âge etant<t> <le> nôtre, avec l'homme le plus vertueux, quand il est aimable, il vaut mieux être deux filles qu'une.

„La Nouv. Héloïse“.

Notre maître n'est pas seulement un homme de mérite, il est vertueux, et n'en est que plus à craindre.

Et si l'on n'y croyait pas, que mettrait-on à la place.

Mme Staël, „Delphine“, dans la préface.

<թարգմանություն>

I մաս, գիրք 1

«Նա սիրում էր այնքան, որքան կարող է որևէ բան սիրել անառակը»:

«Հանցավոր արարքի մասին շարժե խոսել այնքան, որքան ծիծաղելի ու ամոթալի արարքի»:

«Սերը լուկ պատրանք է»:

«Նոր էլոիզ», նրկորդ առաջաբան, էջ 7:

«Ես շատ գոհ եմ նրանից՝ ինձից գոհ լինելու համար: Քո տարիքում, որ նաև մերն է, ամենաառաքինի տղամարդու հետ ավելի լավ է լինեն երկու աղջիկներ, բան թե մեկը, երբ նա սիրալիր է»:

«Նոր էլոիզ»:

«Սեր տերը ոչ միայն արժանավոր մարդ է, այլև առաքինի, որից պետք է ավելի զգուշանալ»:

«Եսկ եթե շահատանք դրան, ինչով կարող ենք փոխարինել այն»:

Տիկին Ստալ, «Դելֆինա», առաջաբանում:

Նկատի առնելով, որ 1864-ի հենց նույն օրերին (ամիսներին), Ռուսսոյի և արևմտյան մյուս հեղինակների երկերի ընթերցանությանը զուգահեռ նախադրանքներն զբաղեցրել են «Աղցմիք» բանաստեղծությունների շարքը և «Արկած» նախաձորն» պոեմը, ավելի ճիշտ՝ նրանց մտահղացման գաղափարը, պիտի հավանական համարել, որ ֆրանսիացի հեղինակներից քաղված այս մտքերը ևս առնչվել են նույն ստեղծագործությունների մտահղացմանը, ինչ որ ձևով ազդակ ծառայել, մանավանդ որ երկու գրողների վեպերում էլ արծարծվում էին իմաստասիրական, գեղագիտական ու բարոյագիտական համանման խնդիրներ: Մաղամ դր Ստալն, օրինակ, «Դելֆինայի» առաջաբանում, ոչ առանց կրթի, պարզաբանել ու պաշտպանել է իր վեպի բարոյագիտական նպատակաուղղվածության հարցեր, որ մեծապես հետաքրքրում էին նախնականին նույնպես: Նկատենք նաև, որ նախնականի գրադարանում ներկայումս պահվում է «Նոր էլոիզ» վեպի ֆրանսերեն հրատարակություններից մեկը՝ La nouvelle Héloïse par J. J. Rousseau, լույս տեսած 1862-ին (Փարիզ), որի մեջ դուրսվում է գտանք «Սերը լուկ պատրանք է» թևավոր արտահայտությունը ճիշտ ու ճիշտ 7-րդ էջում: Վերջինս էլ հիմք է տալիս անվարան ասելու, որ բանտում նախնականի օգտագործած Ռուսսոյի վեպի հենց այդ օրինակն էր (տե՛ս ԳԱԹ, Մ. նախնականի գրադարան, № 3527, օտար):

Այս ընդարձակ շեղումից հետո կրկին վերադառնանք նախնականի հայերեն նշումներին կամ բանաստեղծական տողերին, որոնց ճշգրիտ վերծանումը կապված է ոչ նվազ դժվարությունների հետ: Շատ բառեր ու արտահայտություններ ավելի քան 125 տարիների ընթացքում գրեթե անընթեռնելի են դարձել, իսկ առանձին բառեր ու տառեր՝ խոնացել ու սրբվել: Մենք հնարավոր ճշտությամբ վերծանել ենք պահպանված տողերը և ստացած արդյունքն «Արկած» նախաձորն» պոեմի վերջնական տարբերակի հետ բաղդատելով՝ ընդհանրություններն ու տարբերությունները մատնանշել տողատակին կամ ծանոթությունների մեջ:

Ընթերցողին դյուրութիւն տալու համար՝ բուն պատահիկները ներկայաց-
վում են որպէս հիմնական բնագիր, այն ձևով, ինչպէս թղթին է հանձնել
Մ. Նալբանդյանը, ավարտուն տողերի միջև, նրանցից առաջ և հետո նույն
հաջորդականութեամբ վերականգնելով ու տեղադրելով բոլոր ջնջումները
(ուղիղ փակագծերի մեջ), իսկ տողատակերին (աստղանիշներով) վկայակո-
չելով կամ մեջ բերելով «Արկածը Նախաօրն» պոեմի վերջնական տարբե-
րակի այն հատվածները կամ տողերը, որոնց նախնական վիճակին են մերա-
րևում պատահիկները:

—ԱՐԿԱԾՔ ՆԱԽԱՕՐՆ—
(Հատվածներ Ա տարբերակից)

<1>

[Ճից ընդ ներքին փարումն ծանցին]
[Ե, ի լերանց խնկարերից կոյս իջանէր]
են

Ձգրիսառս թագաւորն ասրին ի աթոռ
<1 անընթ.>
Միածան

Աղբիւր բացեալ ի տան Դաւթի,
Բացեալ մարբէ ջաւիշ որդի.
Ի տան քաւիշ չրնաղ դաւթի,
Կաւթի որդի, զավթի արդի:

<2>

Ասնու դմի ի կողից
Լնու ընդ այնր մարմին
...
քա . . . ին*

Յերկինս ի վեր խառն ընդ ընթ**
Հմբոյնէն, վալելի են

[րմպահկէ, րմպահկումն, կաքուցանեմ]
Յանդիւր, (միշ.յր, կցիւր) [յանուր]

<3>

Անխզելի հանդուցիւք
[Ձիախրոխտ ընթադրութեամբ,

* Ձևադրում այս հատվածի երրորդ տողի փոխարեն դրված են բաղմականեր, իսկ չոր
բորդ տողի միակ բառը դժվարութեան է (չեն կարդացվում մեջտեղի 2—3 տառերը): Կենջ
ստեղծման լեզենդր, որ այս տարբերակում Նալբանդյանը համառոտիվ վերհիշել է, հետագա-
յում հասկանալի է և հղել Ս. Գրքին.

...նւ Տէր արար նմա կին,
Իսկ թէ ո՞րպէս կամ դիա՞րդ,
Ո՞չ ուսուցանէ դքեղ Գիր.
Թէ չիցէ քո լուեալ ցարդ՝
Հապա կա՛լ և ընթերցի՛ր:

(զլ. Բ, տողեր 8—12)

** Համեմատի՛ր վերջնական տարբերակի հետ.

Յերկինս ի վեր, խառն ընդ բոց

(զլ. Ա, տող 168)

Ո՛ր վայրագարչ մեղկութեամբ՝
Աղամ յնւա մերձեցեալ]

[Ի նաւալի աջն լինել
Ընդ գծիմ...]

[Զիախրոխտ ընթացողութիւն
Գերապանծ գրիդ
Զմեղ սուրացեալ...]

<4>

Եւ ի տեսիլ հեշտալեաց
[Ալք մթագնին]
Բանդագուշի գլխովին,
Ջի էր Աղամ ուխտաւոր
Դի՛ դառածիլ մեղկութեամբ
Լուտի ըմպահկի յահուր
[Ի ձիախորն]
Զիախրոխտ ընթացողութեամբ
[յորս]

ա. Զարկուցանէ շքնաղն
բ. Զարկուցանէ ղնախամայր
Յորսայս անդէն առ հտեղբ
Եւ ընդ գծեալ [ի խոնարհ] առնարար
Նկրտի խեթկել հղջերբ*։—

<5>

Մղիս ի վեր ամբառնալ
Զճակ [տեսեալ] յառեալ ըստ ազգի

ա. Այնինչ յառեալ Աղամայ
բ. Այնինչ տեսեալ Աղամայ
Ի ճակ ըստ իւրոյ ազգի
Մեղս ի վեր ամբառնալ
Ոգեխառնիւ և թռչիւ
<չղրված բառեր> դրախտաճուն
[վերելակ]

* Համեմատի՛ր վերջնական տարբերակի հետ.

Իսկ ի տեսիլ հեշտալեաց
Բանդագուշեալ գլխովին.
Եւ ղինչ գտայց ուխտագանց,—
Ասէ,—առ ինչ տուաւ կինս։

(զլ. Բ, տող 53—56)

է՛ր, է՛ր Աղամ ուխտաւոր,
Մի դառածիլ մեղկութեամբ,
Ուստի ըմպահեալ յահուր
Զիախրոխտ ընթացողութեամբ
Զարկուցանէ ղանշաղախն
Յորսայս անտէն առ հտեղբ
Եւ ընդ գծեալ շեշտ ընդ ակն
Նկրտի կոփել հղջերբ։

(զլ. Բ, տող 77—84)

/Վերսաստել թէ եկեալ են/
 Բնդվայրացս պշրանաց
 /Ընթուիմ ծագել նշողի են/
 Թւրաբամ, <....> եայ*, Լլ...ութին, թող խմբուած
 /ծպենեմ, ներ., դուղել, զօղել են/
 հուվադութին, հափափումն*

~6~

/Ոյք տացես հարամանդն/
 Եւ ո՛չ գիտէր
 ո՛չ ղննջել,
 ո՛չ յառնել.
 /Հենդ, տաղ/

Հնդովին, արմատակի
 Ըստ իմանիմ[¹]. տրեխաւորեալ յամբոյր

Մածուց, իբրեւ դպանիր
 դարեւակ
 Ձի մի՛ կարեայց անծաղիկ,
 Բաղմախաղալի, լպիրծ.

Պոեմի՝ Ե. Շահադիդի հրատարակած տարբերակի ձեռագիրը, որ, ինչպես ասացինք, անցյալ դարի ճիշտ վերջին տարում արտագրվել է Մ. Նալբանդյանի բուն ինքնագրից (երկուսն էլ հետագայում անվերադարձ կորել են), խորագրված է եղել «Արկածը Նախաօրն»¹¹։ Այդ բնագիրն ու խորագիրն էլ օգտագործել ու որդեգրել են մերօրյա բանասերները՝ արտատպելով Նալբանդյանի երկերի ակադեմիական դույզ հրատարակություններում¹²։ Բայց ահա՛ «Արևելյան մամուլ» հանդեսում (1874, № 9, էջ 382—384) տպագրված հատվածը, որի համար հիմք է ծառայել Նալբանդյանի պոեմի դարձյալ կորած մեկ այլ արտագրություն և որը Ե. Շահադիդի հրատարակած բնագրի համեմատությամբ նկատելի տարբերություններ ունի, խորագրված է «Արկածը Աղամայ»։ Պիտի կարծել՝ պոեմի նախնական տարբերակը, հետևաբար և մեր հրատարակած պատառիկները, որ նույն տարբերակի ստեղծագործական ձեռագրերից են, նույնպես կրել են «Արկածը Աղամայ» խորագիրը։ Բայց սույն հրատարակության մեջ մենք պատառիկները դնում ենք «Արկածը

* Իսաա զրված բառ, առաջին տառերի փոխարեն զրված է գծիկ։
 * Իսաա զրված բառ, առաջին տառերի փոխարեն զրված է գծիկ։

Այն ինչ յառեալ Աղամայ
 Ի նախն ըստ իւրոյ ազգի,
 Մղիս ի վեր ամբառնայ
 Սիրախառնիլ և թռչի։
 (զլ. Բ, տող 49—52)

Չալաբար վերելակեալ
 Յրնթադրեալն դրախտաճոռն
 Յազլի ոչ թւրքամեալ
 Եւ ընծուին դէմք քաջարւոյն։
 (զլ. Բ, տող 85—89)

11 Տե՛ս Ե. Շահադիդի. նշվ. աշխ., Հավելված, էջ ԺԳ, նախապես՝ «Լուսա», 1904, № 1, Հավելված, էջ ԺԳ։
 12 Տե՛ս Մ. Նալբանդյանի երկերի ակադեմիական հրատարակության 1945 (էջ 147—155) և 1979 թ. (էջ 147—156) առաջին հատորները։

Նախահօրն» վերնագրի տակ, որովհետև նախ՝ պոեմի ավարտուն տարբերակը այդ վերնագիրն է ունեցել, և հետո՝ մեր հրատարակածը դրա նախնական պատկերը ներկայացնող բեկորների և ծրագրային նշումների մի փոքր մասն է լուկ և ոչ քիչ թե շատ ամբողջական տարբերակ:

Հրատարակվող պատառիկներն առաջնակարգ կարևորություն են ներկայացնում Նալբանդյանի «Աղցմիք» բանաստեղծական ժողովածվի երկրորդ մասը կազմող «Արկածք նախահօրն» պոեմի ստեղծագործական պատմություն հետազոտման համար, քանի որ առ այսօր, անգամ ընդհանուր գծերով, դեռ պարզված չեն ոչ պոեմի հղացման ճշգրիտ ժամանակը, ոչ էլ թեմայի ու սյուժեի աստիճանական ձևավորման ընթացքը:

Փորձենք առկա պատառիկների օգնությամբ լուսաբանել այդ խնդիրները, որքանով դա հնարավոր է:

Մ. Նալբանդյանի բանտի Հիշատակարանից, ապա և նրա կյանքի և գործունեության տարեգրությունից, որ բացառիկ նվիրվածությամբ հյուսել է Արամ Ինճիկյանը, տեղեկանում ենք, որ 1864-ի ամռանը Մ. Նալբանդյանը մի շարք հանձնարարություններ է տվել հայրենակցին ու մտերիմ բարեկամին՝ պետերորդաբանակ երաժիշտ և բանաստեղծ Հովհաննես Սահրատյանին, իրեն հետաքրքրած այս կամ այն գիրքը ձեռք բերելու համար, կամ էլ հենց բանտում հանդիպումներ ունեցել նրա հետ, հետաքրքրվել բարեկամի ստեղծագործական ծրագրերով և կյանքի հանգամանքներով, նամակներ փոխանակել:

Որինակ՝ 1864 թ. հունիսի 17-ին, եղբորը (Ղազարոսին) ուղղված նամակում Նալբանդյանը հետաքրքրվում է, թե ինչու է դանդաղում Հ. Սահրատյանի թարգմանած «Տրովատորի» (Զ. Վեդդի «Տրուբադուր» օպերայի երաժշտական բնագրի ու լիբրետոյի) տպագրությունը (էջ 275): Հուլիսի 1-ին նամակ է ստանում Հ. Սահրատյանից ու նույն օրն էլ գրում պատասխանը, որոնք երկուսն էլ չեն պահպանվել, և բովանդակություններն էլ անձանոթ են տակավին (էջ 276), իսկ հուլիսի 7-ին Հովհաննեսից ստանում է ծխախոտ ու գրքեր (դժբախտաբար, չգիտենք և ոչ մեկի խորագիրը): Եվս երկու նամակ Նալբանդյանն ստանում է հուլիսի 12-ին և 28-ին¹³, ըստ որում՝ վերջին նամակը, գրված լինելով հենց նույն օրը, Նալբանդյանին է հանձնել հորեղբորդդին՝ Սաշա-Ալեքսանդրը: Այդ նամակի առաջին էջի վերին լուսանցքում Նալբանդյանն արել է հայերեն նշում (մատիտով). «Հուլիսի 28-ին ստացա»: Ստացված, նաև գրած այդ ու նախորդ բոլոր նամակներն, ընդունված կարգով, ուսեռեն էին, որովհետև բանտարկյալներին արգելված էր ուրիշ լեզուներով նամակներ գրել և ստանալ:

«Սաշայի հետ,—տեղեկացնում էր Սահրատյանը,—ուղարկում եմ երկու ֆրանսերեն գիրք: Ես երրորդն էլ գտա, բայց չվերցրի, որովհետև այն առանձին հրատարակություն էր. մինչդեռ դու գրել էիր. «Գրքերից մեկը թողնել, եթե չկարողանաք գտնել մեր հատորում»: Իսկ վերջին գիրքը՝ «Մարտին» խորագրով, ես փնտրեցի ուրիշ տեղեր էլ: Այն չկար: Սույնի հետ ուղարկում եմ ևս երեք գրքույկ՝ «Մայրական սեր» վերնագրով...»¹⁴:

Առանձնակի ուշադրության են արժանի վերջին գրքույկները, որոնք, երևի թե, դարձյալ ֆրանսերեն լեզվով էին: Ասենք, որ «Մայրական սեր» խորագրով գրքույկները սիրված ու տարածված էին անցյալում: Կուզենայինք մեջ բերել շատերից մեկի համառոտ բովանդակությունը՝ հենց սկզբից հիշեցնելով, որ այն նախ՝ խալիբեն թե ֆրանսերեն բնագրից թարգմանվել է

¹³ Այս ամենի համար սկզբնաղբյուր ծառայած՝ Նալբանդյանի նամակներն ու օրագրային գրառումները («Բերդի հիշատակարանը») մշակված են Ա. Ինճիկյանի «Միթայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրության» մեջ (տե՛ս այդ գրքի ղույզ հրատարակությունները, Երևան, 1954 և 1980 թթ.), որի էջերն էլ մատնանշել ենք վերևում (I հրատ.):

¹⁴ ԳԱԲ, ՄՆՑ, № 121—II:

ռուսերեն, հետո՝ ռուսերենից հայերեն, և լույս է տեսել Նալբանդյանից շատ հետո, Բաքվում, 1912-ին, բայց նյութը Միքիլիայի 1783 թ. զարհուրելի երկ-րաշարժի օրերին Մեսսինա քաղաքում կատարված մի սրտաշարժ եղելու-թյուն է, մայրական սիրո ամենահաղթ ուժը ցուցադրող:

«Ընդհանուր սարսափն այնքան մեծ էր,—պատմում է անանուն հեղի-նակը,—որ մարդիկ բոլորովին կորցրել էին իրենց խելքն ու միտքը. կարեկ-ցության ղգացումը, կարծեք, նրանց մեջ բոլորովին մեռել էր. նրանք ուշա-դրութուն անգամ չէին ուզում դարձնել մահամերձ ընկածների վրա. ամեն մարդ մտածում էր միայն իր մասին, չէր երևում մեկը, որ ընկածին ձեռք մեկներ և կամ ճմլվողներին ավերակների տակից դուրս քաշել ցանկանար: Ամենքը փախչում էին խելացնոր հապճեպով, ամենքի էլ միակ մտածու-թյունն էր, որքան կարելի է շուտով, քաղաքից դուրս փախչել: Հայերը մո-ռացել էին իրենց զավակներին, մայրերն՝ իրենց աղջկանց, և զավակները հիշել անգամ չէին ուզում իրենց ծնողներին»:

Ահա այս դժոխքի մեջ, երբ ստորերկրյա ցնցումների առաջ բերած սար-սափի և տապալվող շենքերի ու փլվող առաստաղների դղրդյունը հասնում է մարկիդ Սպաղարի պալատը, մարկիդուհին սարսափից ուշադնաց է լինում, իսկ տարեց մարկիդը, մոռանալով կից սենյակում քնած երկու տարեկան որ-դուն, մի բանի մասին է միայն մտածում՝ ազատել կնոջը. գերագույն ճիգե-րով՝ նա կնոջ անզգա մարմինը ծխի ու փրատակների միջով, մի կերպ, հասց-նում է ծովափ և, ուժասպառ, գետնին տապալում: Իսկ երբ քիչ անց ուշքի է գալիս մարկիդուհին և շրջապատի մարդկանց մեջ չի տեսնում որդուն, իր հերթին թողնում է օգնության կարոտ ամուսնուն և խելագարի պես վազում դեպի կործանվող քաղաք: Անասելի տառապանքներով՝ նա մի կերպ հասնում է իրենց կիսակործան պալատը, որն այժմ շրջապատված էր բոցերով, հն-թարկվում նոր վտանգների, հրաշքով փրկվում մահից և, ի վերջո, կարողա-նում է թափանցել որդու սենյակը, հափշտակել նրան և բոցերի ու փրա-տակների միջով սուրալ դուրս: Ավերված քաղաքի շատ փողոցներ արդեն փակված էին: Ողջ գիշեր, երեսային գրկած՝ մարկիդուհին թափառում է այս ու այն կողմ և միայն լուսաբացին անսպասելի հայտնվում նավահան-գրատում. փրկվում են և՛ որդին, և՛ մայրը¹⁰:

Նալբանդյանի ընթերցած «Մայրական սեր» խորագրով գրքուկներն ևս իրական դիպվածի վերադարձնողություններ պիտի լինեին՝ անձնագոհ սերն առ զավակը ցուցադրող:

Օտար ազգերի կանանց անձնագոհ սիրո զարմանալի դրսևորումները ցուցադրող նմանօրինակ պատմությունները Նալբանդյանին պահ մի փո-խադրում են անցած հերոսական ժամանակներ, հիշեցնում հինգերորդ դարի հայ կանանց ապրած գերմարդկային տառապանքներն ու անցած գողգոթան, նրանց անօրինակ հաստատակամության և բարոյական կատարելության մա-սին վկայող Եղիշիի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» հերոսական ասքի վերջին դրվագները և պարտադրում, որպես հարգանքի ու հիացմունքի տուրք, իր վերաբերմունքն արտահայտել: Եվ Նալբանդյանը հենց Հ. Սահ-րատյանի նամակի շորրորդ, մաքուր էջի վրա սկսում է արտագրել Եղիշիի դյուցազներգության Ութերորդ եղանակից խիստ հատկանշական մի քանի տող՝ չկարողանալով, սակայն, հասնել խոսքի ավարտին ու իր սեփական բանաստեղծական եզրահանգումն անել: Ըստ որում, մինչև արտագրելը գրչափորձեր է արել՝ գրելով «խոստորնակ» և «փոշոտեց» բառերը (վերջինը՝ կիսատ):

Եղիշին վիպում էր. «Փոշոտեցան և ծխոտեցան սրահակք և սրկապանք նորեկ հարսանց, և սարդի ոստայնք ձգեցան ի սենեակս առաքաստաց նոցա: Կործանեցան բարձրագահք տաճարաց նոցա, և խանգարեցան սպասք երե-

¹⁰ Տե՛ս Պատմվածքներ իրական կյանքից՝ Մայրական սեր, Բերանժեռի կյանքից, Բայրո-նը և իր շուքը, Թարմ. ռուս. Մ. Առաքելյան. Բաքու, 1912, էջ 3—27:

խանաց նոցա: Անկան, կործանեցան ապարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրք ապաս...»:

Նախադասության ավարտին հասնելու համար մնում էին արտագրելու ապաստանի րաոի մնացած շորս գրերը՝ ...տանի, և հաջորդ բառը՝ նոցա: Բայց, ինչպես երևում է, Նալբանդյանին պաշարում են նոր մտքեր, նա տարվում է այլ մտածութուններով և նախ՝ առժամանակ, հետո՝ ընդմիջտ, դադարեցնում իր արտագրութունը, որն, ինքնին վերցրած՝ գրչության արվեստի ընտիր նմուշ է:

Օրեր հետո արդեն (այս անգամ նրա ձեռքին այլևս գրիչ չկար, այլ սև մատիտ), Նալբանդյանի անհագ հարցասիրության նյութ են դառնում վաղնջական այլ դիպվածներ: Այժմ էլ նրա երևակայության մեջ հառնում է Տիրամոր (Վոյսա) քնքուշ ու նվիրական կերպարը, որը մայրերից ամենագործողներն ու վշտահարն էր, հողից ծնված, տառապանքներից ու վշտերից ամենածանրագույնը տեսած, սրբացած, հավերժացած: Չգիտես, ներքին ի՞նչ գործությամբ՝ խեղդելով իր հույզերը և ընթացք չտալով զգացումներին, միաժամանակ լուսվամբ սքողելով իր մեծ վիշտը՝ Տիրամայրը մահվան էր ուղարկում իր զավակին, որպեսզի փրկվեր մեղավոր մարդկութունն ու հանցավոր աշխարհը: Նալբանդյանի գրիչն այդ հոգեվիճակը փորձելով վերարտադրել՝ թղթին է հանձնել բանաստեղծական միայն մի տող՝ արտաքնապես, կարծես, լույսով ու հույսով ողողված:

Եւ ի լերանց խնկարերից կոյս իջանէր...
են

Ասել է, թե թղթին չհանձնված այս և մյուս տողերը (դրանց վկան «են» բառն է), որոնք Նալբանդյանն անգիր պահում էր իր մտքում, ձևավորվել են Ավետարանի վերջին դրվագների շուրջ խորհրդածելու պահերին:

Գողգոթայում, մի գերեզմանում, Քրիստոսի մարմինն ընդունված ծեսով պատանելուց և պահ տալուց հետո, երրորդ օրը, արևածագին, լեռ են բարձրանում խնկարեր կանայք՝ վերստին գերեզմանը բաց անելու և Հիսուսի մարմինը կրկին խնկերով ու յուղերով օծելու (Մարկոս, ԺԶ 1, Դուկաս, ԻԳ, 56 և ԻԴ, 1): Բայց տեղ հասնելով՝ գերեզմանը գտնում են դատարկ, իսկ պատանքները այս ու այն կողմ ցրված... Նրանց վախը փարատում է հրեշտակը, որն ավետում է Հիսուսի հարությունը և ասում, որ նրան կարելի է տեսնել Գալիլիայում: Ի՞նչ կլինեք այս ամենից հետո որդեկորույս մոր հոգեվիճակը, որ միշտ խեղդել էր իր հույզերը. ի՞նչ մտածումներով և հույզերով էր նա իջնում Գողգոթայի բարձունքներից: Նալբանդյանի տողն ահա՛ այս իրադրութուններին է վերաբերում. «խնկարեր» մակդիրն էլ այդ առումով է գործածվում: Ծիշտ է, Ավետարանների մեջ Մարիամի մասին տեղեկությունները ժլատ են, բայց որ Հիսուսի մահվան ժամանակ մայրը կանգնած էր խաչի մոտ, այդ հաստատ է (Հովհաննես, ԺԹ, 25—27), իսկ ըստ «Գործք Առաքելոցի», Հիսուսի երկինք համբարձվելուց հետո էլ, երբ աշակերտները վերադառնալով Ձիթենյաց լեռնից՝ Երուսաղեմի իրենց վանքում սկսում են աղոթքները, նրանց հետ էր նաև Հիսուսի մայրն իր մյուս որդիների հետ:

«...Մինչ դեռ հայէին նոքա՝ վերացաւ <Յիսուս> և ամպն կալա՛ւ զնա յաշաց նոցա: ...Ապա դարձա՛ն յԵրուսաղէմ յանուանեալ լեռնէն Ձիթենաց... Եւ իբրեւ մտին, ելին ի վերնատունն, ուր վա՛նքն իսկ էին... Սոքա ամենեքեան էին հանապազողորհալ միարան յաղօթս հանոներ՝ կանամբք, և Մարեմաւ մա՛րբն Յիսուսի՝ և եղբարբք նորա» («Գործք Առաքելոց», Ա, 9, 12—14): Նշանակում է՝ Մարիամին նվիրվելիք դրվագը հիմքեր ունի, և վերոհիշյալ դիպվածներից էլ պիտի բխեցվեն մայրական սիրո մասին Նալբանդյանի նոր նկատումներն ու բանաստեղծական շեղումները:

Բայց Նալբանդյանի երևակայության ցուքերը շատ շուտով մարում են: Նրան այլ բան չի մնում, քան հրաժարվել նախապես հղացած դրվագն ամ-

բողջացնելու մտքից, որով, փաստորեն, ավետարանական ոգով մի նոր պատում պիտի շարահյուսեի Մարիամի մասին, շնչում է սկսած տողը ու տարվում նոր մտածություններով: Հիմա էլ նա կլանվում է Տիրամոր կերպարի փոխարեն Որդու վեհ գործերը ներդրելու գաղափարով, հմայվում Քրիստոսի կյանքի պատմությամբ և որոշում գրելիք պոեմը նվիրել հենց Քրիստոսին՝ պատումն սկսելով ճիշտ նրա նախահայրերից:

Ըստ ավետարանիչների՝ Քրիստոսը շառավիղն էր հրեական հին մարգարեների, նրա երակներում հոսում էր բիբլիական Դավթի ու վերջինիս ժառանգների արյունը, հետևաբար, ամենայն իրավունքով՝ Քրիստոսին անվանում էին Դավթի որդի: Քրիստոնեության առաջին դարերում այդպես էլ գրում էին ավետարանիչները, մինչ շարադրում էին նրա կյանքի անցքերը՝ «Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի՝ որդու Դավթի» (Մատթ., Ա. 1): «...Ողորմեաց մեղ, որդի Դավթի» (Թ, 27, Ի, 30, 31, ԻԲ, 42): «Քրիստոսն որդի Դավթի է» (Մարկ., ԺԲ, 35) և այլն:

Նախնական «Արկած Աղամայ» պոեմի բուն շարադրանքին անցնելուց առաջ թղթին է հանձնում նաև մտքում ծագած նմանաբնույթ մի բանի տող.

Աղբիւր բացեալ ի տան Դավթի,
Բացեալ մաքրէ բաւիլ որդի.
Ի տան բաւիլ լքեալ գաւթի,
Դավթի որդի, գաւթի արդի...

Բայց այսքանով էլ ավարտվում են հեղինակի դեգերումները թեմայի որոնման ասպարեզում (նաև՝ առաջին պատառիկի պարունակությունը): Նախնական այնուհետև հանգամանորեն ծանր ու թեթև է անում հետագա գրելիքը, երեի թև վերհիշում Ջոն Միլտոնի «Կորուսեալ դրախտ» պոեմի հերոսներին: Սրանից հետո արդեն, ոչ առանց դժվարության, վերջնականապես գտնում է և՛ գլխավոր հերոսին, և՛ գործողությունների ծավալման ոլորտն ու ընթացքը: Երկրորդ, նաև հաջորդ պատառիկները հենց այդ են հաստատում: Այս կետից սկսած՝ Նախնականի ուշադրությունը կենտրոնանում է նախահոր արկածների, ավելի ճիշտ՝ Աղամի տվայտանքների, նրա մթագնած ուղեղի առկուշած հեշտանքների վրա, որոնք ինչքանով որ մարդկային են ու իրական, նույնքան էլ մտապատրանքներ են և երևութական: Հիշյալ նյութի տեական մշակման արդյունքը դարձան երկու-երեք հատվածական ու ամբողջական փորձեր, «Արկած Աղամայ» խորագրով առաջին ամբողջական տարբերակը և նրա վերջնական մշակումը՝ փոքր-ինչ խմբադրված խորագրով («Արկած Նախահոր»), որը գրված է մեծ ոգևորությամբ և հղկված՝ բավականաչափ ուշադրությամբ: Պատահաբար պահպանված և սույն հոդվածում առաջին անգամ ընթերցող շրջաններին ներկայացվող կրկնապատկեր հատվածները այդ պատումի նախնական շարադրանքի բեկորներից են լուկ:

Երբ է, ուրեմն, գրված «Արկած Աղամայ» կամ «Արկած Նախահոր» պոեմը, որը նախորդ ուսումնասիրողները չեն պատկերացրել «Աղջմիք» բանաստեղծական շարքից անջատ, և ինչ ասել են այս վերջինի մասին, հավասարապես վերաբերել է նաև պոեմին: Ա. Ինճիկյանի կարծիքով՝ «Աղջմիք» շարքն ու պոեմը գրված են 1864 թ. «ամառը»¹⁶: Այդտեղ շուրջ հանդիսանան, «Աղջմիքը» համարելով Նախնականի՝ բանտում գրած երկերից և հետևելով Ե. Շահազիզին, իր խոսքը չի մանրամասնել, Նախնականի երկերի ակադեմիական գույք հրատարակությունների համար պոեմի բնագիրը պատրաստող և ծանոթագրող Ն. Մուրադյանն էլ բավարարվել է մոտավոր ու անորոշ մի ժամանակահատվածով. «1863 թվականին... կարդալով (Ն. Գալֆայա-

¹⁶ ՏՃ՝ Ա. Ինճիկյան. Միջակ Նախնականի կյանքի և գործունեության տարեգրություն, էջ 279:

նի—Պ. Ն.) «Վարդենիքի» կեղծ մամթխած սիրային երգերը... Նալբանդյանը գրում է մի շարք... պարողիաներ, թե որոշակիորեն ո՞ր թվականին, հայտնի չէ, համենայն դեպս 1863—65 թթ. ընթացքում¹⁷։ Սրանով, սակայն, հարցը չի լուծվում, և ուշադիր լինելու դեպքում դժվար չպիտի լիներ առավել հրստակ խոսք ասելու և՛ պոեմի գրության թվականի, և՛ շարժառիթների մասին։

Ինճիկյանը, հարկավ, ճշմարտության ավելի մոտիկ է, բայց նրա տեսակետը կարիք ունի որոշ սրբագրման։ Որովհետև 1864 թ. ամառվա ընթացքում «Աղցմիք» շարքն ու «Արկածք Նախահօրն» պոեմը ոչ թե գրվածավարտված էին, այլ ամառվա վերջերում էր միայն, որ Նալբանդյանն սկսում է մտմտալ այդ ուղղությամբ և բանտում նստած՝ իր գիտական պարապմունքներին զուգընթաց, աստիճանաբար հստակել նաև բանաստեղծական այս մտահղացումը, թղթին հանձնելով վերջինիս առաջին արդյունքները՝ հղկված ու անհարթ հանգավոր տողերի և ծրագրային նշումների ձևով։

Իսկ թե ինչքան ժամանակ է Նալբանդյանից կլանել բուն գրության ընթացքը և նախնական ու վերջնական տարբերակների խմբագրումը. հարկավ, ոչ մեկ օր, այլ օրեր ու շաբաթներ, անգամ ամսից էլ ավելի։ Մի բան աներկբայելի է. Նախահօր «արկածների» նկարագրությանը Նալբանդյանը նվիրվել է ոչ միանգամից։ Ն. Սահրատյանի նամակն ստանալուց հետո, 1864 թ. հունիսի 29-ից կամ էլ, ավելի ճիշտ՝ օգոստոսի սկզբներից սկսած, մի որոշ ժամանակ, նա գեռ ուշի-ուշով կարդում էր Նիդերլանդական Վասն Վարդանայ և Հալոց պատերազմին» դյուցազնի գրությունը, նոր ստացած ֆրանսերեն գրքերը, հետո ձեռքն է առնում Ժ. Ժ. Ռուսսոյի և մադամ դը Ստալի վեպերը, քաղվածքներ և ընդօրինակություններ անում նրանցից։ Եվ այդ ընթացքում ու ընթերցանությունների կես ճանապարհին է, որ կլանվում է բանաստեղծական նոր կերպարներով ու գաղափարներով և սկսում աստիճանաբար մարմին տալ հստակված մտահղացմանը՝ «Արկածք Ադամայ» պոեմին և «Աղցմիք» բանաստեղծական շարքի այս կամ այն քերթվածին։ Ահա ինչու Ն. Մուրադյանի առաջարկած թվականը շատ է ընդհանուր, իսկ սկզբնականով (1863)՝ ոչ ճիշտ։ Բանասերը նկատի է առել Պետրոպավլովյան ամրոցի խցերից մեկում Նալբանդյանի գրական ստեղծագործական աշխատանքով պարապելու ողջ ժամանակամիջոցը, մոռանալով որ այլ բան է մտահղացումը, այլ՝ գրությունը, որ բանաստեղծական երկերը մտահղացումից հետո թղթին են հանձնվում բավականաչափ արագ, իսկ հաճախ էլ՝ երբեք։ Արդեն վկայակոչված գրքում նույն հարցի առնչությամբ Ծ. Շահադիզն ասել է. «Իսկ որ «Աղցմիքը» գրված է Պետերբուրգում, երբ Նալբանդյանն առանձնացած էր այնտեղ, այդ էլ երևում է այն հանգամանքից, որ նախ՝ Խորենի (Գալֆայան—Պ. Ն.) «Վարդենիքը» լույս է ընծայվել 1863 թվին, ուրեմն և՛ Նալբանդյանի առանձնացած կամ առանձնություն մեջ եղած միջոցում, երկրորդ՝ նա Պետերբուրգից (այսինքն՝ բանտից—Պ. Ն.) դուրս գալուց (այսինքն՝ 1865 թ. մայիսից—Պ. Ն.) հետո, յուր հիվանդության սաստկանալու պատճառով, բացի նամակներից, այլևս ոչինչ չի գրել»¹⁸։

«Աղցմիք» խորագրով բանաստեղծական շարքի և «Արկածք Նախահօրն» պոեմի հորինման ազդակները և հանգամանքները միանշանակ չեն, և չի կարելի երկուսն էլ հանգեցնել բացառապես միևնույն աղբյուրին՝ Խորենի Գալֆայանի «Վարդենիք» ժողովածուի երևան գալուն, որը տպագրված ինքնով թեոդոսիա քաղաքում, 1863-ին, Նալբանդյանի ձեռքը կարող էր հասնել հրապարակ հանվելուց, բայց ոչ տպագրվելուց անմիջապես հետո, և այս էր, որ պետք էր առաջին հերթին պարզել, իսկ այդ ուղղությամբ չեն էլ մտածել։ Թե չէ՝ թեոդոսիայից մինչև Պետերբուրգ թղթակցությունն ամենաուշը մի քանի օրում կհասներ հասցեատիրոջը։ Եվ հետո՝ ո՞վ է «Վարդենիքը» տարել

17 Տե՛ս Մ. Նալբանդյանի Երկերի լիակատար ժողովածվի 1945 և 1979 թթ. առաջին հատորների ծանոթագրությունները, երկու դեպքում էլ էջ 443։

18 Ե. Շահադիզ. Նշվ. աշխ., էջ 145։

րանտ, նալրանդյանի համար. հեղինակը, այդ բացառված է: Այվազովսկի¹ն՝ նույնպես: Ուրեմն՝ պետք է ճշտել ոչ միայն գիրքը տպարանից վաճառքի հանվելու ամիս-ամսաթիվը, այլև այն Պետերբուրգ ուղարկողի և Նալբանդյանին հանձնողի անունը, որովհետև անձամբ Նալբանդյանը, որքան գիտենք, նախապես չի հետաքրքրվել ու պահանջել «Վարդենիքը»: Ամփոփենք. «Արկածք Նախաճօրն» պոեմի գրությանը նախորդել են թեմայի տեական որոնումները: Մինչև Աղամի կերպարին հանգելը՝ Նալբանդյանը հրապուրվել է առ սուրբ ու նվիրական էություններով ու պատկերներով (հինգերորդ դարի հայ կանայք, Տիրամայր, Հիսուս Քրիստոս) և նշանակալից դեգերումներից հետո միայն (դրա ապացույցներից է նշումների միաժամանակ թանաքով և մատիտով լինելը) շեղել է ստեղծագործական քայլերը և բռնել բոլորովին ուրիշ ճանապարհ, փարել դեմքերի ու դեպքերի, անցքերի ու արկածների վերարտադրման միանգամայն այլ ոճի՝ ռոմանտիկ ներքողի ու հիմնագույթյան փոխարեն հյուսել Նախաճօր, ավելի ճիշտ՝ մարդու իրական, բնական ապրումների մասին երգիծական ու երևութական մի պատմություն:

«Արկածք Նախաճօրն» պոեմի հղացումը տեղի է ունեցել 1864 թ. օգոստոսից հետո, թերևս աշնանը, սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսներին, բայց ոչ երբեք 1863-ին, ինչպես ենթադրվել է: Իսկ թե Նալբանդյանը երբ է սկսել ու ավարտել չպահանջված ու մեզ հասած տարբերակների վրա ստեղծագործական աշխատանքը, այդ հարցի գոհացուցիչ պատասխանը երբեք էլ հնարավոր չէ տալ, որովհետև մեր ձեռքին տառացիորեն և ոչ մի նյութ չկա:

Պոեմի մահաղացման մեջ, հարկավ, իրենց մասնակցությունն են բերել Ժ. Ժ. Ռուսսոյի, մադամ դը Մալի և ֆրանսիական այլ հեղինակների երկերը, որոնց ընթերցանությամբ Նալբանդյանը տարվել է հենց նույն օրերին ու լանտի նույն խցում, «Արկածք Նախաճօրն» պոեմը գրելու շրջանում: Դրանցից մի քանի քաղվածք՝ Նալբանդյանի ձեռքով արտագրված, որոնք մեջ լերինը նախորդ էջերում, Սահրատյանցի նամակին հաջորդող մաքուր էջերից, մեր ասածի ապացույցն են և բնութագրում նույնն են, ինչ պոեմի և «Աղցմիք» առաջին, բնարական մասի համար որպես բնաբաններ օգտագործված թևավոր խոսքերը՝ քաղված Շեքսպիրի, նույն Ռուսսոյի, Բալլունի և Բերանսեի ստեղծագործություններից:

Բայց այդ իրողությունն, ի վերջո, մեզ հուշում է կռահելու մասնակցության չափը և քաղվածքների բուն խորհուրդը: Արդեն Նալբանդյանի ձեռքով կազմված «Աղցմիքի» ուղերձը հավաստում է.

Որում ետրէն հաճապազ
Լարուկտուր և քնարին
Վարդենեաց ոչինչ նիազ
Գողտրիկ անդրաձայնութիւն...

նշանակում է, Նալբանդյանը պարզորոշ ասում է, որ իր գրվածքը յուրօրինակ պարոդիա է ի. Գալֆայանի «Վարդենիքի»: Ժողովածուն ևս այդ առումով ուշադիր թերթելով՝ տեսնում ենք, որ Գալֆայանը ցրեթե բոլոր ստանավորներն օժտել է բնաբաններով՝ քաղված Աստվածաշունչ մատյաններից, անտիկ հեղինակներից, ֆրանսիացի, անգլիացի, ռուս և այլ գրողներից: Նույն կերպ է վարվել նաև Նալբանդյանն իր պարոդիաների մեջ. բուն «Աղցմիք» ժողովածուն, ընդհանուր առաջաբանը և «Արկածք Նախաճօրն» պոեմի երկու մասերը նույնպես բնաբաններ ունեն: Հետևաբար, նորահայտ ֆրանսիական քաղվածքները առաջին հերթին որպես բնաբաններ պիտի օգտագործվեն «Աղցմիք» շարքի ոտանավորների համար, որոնց նմուշները վերջնական բնագրում զուրկ են դրանցից:

ОТРЫВКИ ИЗ ПЕРВОНАЧАЛЬНОГО ВАРИАНТА ПОЭМЫ
МИКАЭЛА НАЛБАНДЯНА «ЗЛОКЛЮЧЕНИЯ ПРАОТЦА»

Доктор филол. наук П. О. АКОПЯН

Резюме

Поэтический сборник «Ахцмик» («Имны»), состоящий из 12 стихотворений и поэмы «Злоключения Праотца» — лучшее из творений великого армянского писателя и мыслителя Микаэла Налбандяна, созданное им в последние годы жизни в Петропавловской крепости. Издание полного текста и его глубокое исследование было осуществлено лишь в начале нашего века, сразу же после выявления известным филологом Ервандом Шахазизом потерянной рукописи (см. его «Хорен епископ Галфаян и «Ахцмик» Налбандяна», Тифлис, 1904). Однако, до сего дня остался ряд нерешенных вопросов, касающихся как истории и даты создания этих сочинений, так и содержания первоначальных набросков и вариантов, часть которых выявлена нами и приводится в статье. Скрупулезный анализ этих фрагментарных стихов, являющихся частью черновых вариантов поэмы «Злоключения Праотца», дает основание утверждать, что она создана не в 1863—1865 гг., как полагалось раньше, а не ранее августа 1864 г. и что Налбандян несколько раз менял сюжетную канву поэмы. Сначала, ознакомившись с французской книжкой «Материнская любовь», он намеревался воплотить в поэме героические и мученические образы армянских женщин и начал свои подготовительные работы с выписок из сочинения историка V в. Егише. Затем Налбандян сосредоточился на образе Богородицы и написал начало поэтического отрывка. Основой этого замысла должны были стать переживания Богородицы о воскресении из мертвых сына — Иисуса. Судя по следующему отрывку, писателя далее занимал образ самого Иисуса и его родоначалие. И лишь впоследствии был выбран окончательный сюжет с новым героем — Праотцом Адамом со своими «злоключениями». Параллельно с сочинением поэмы и стихотворений Налбандян изучал романы «Новая Элоиза» Руссо и «Дельфина» мадам де Сталь, делая из них выписки для эпиграфов к отдельным стихотворениям сборника. В окончательном тексте эпиграфы отсутствуют. Нами впервые приводятся также эти выписки.